



Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Ա Ռ Ա Ք Ե Լ Վ Ա Ր Դ Ա Պ Ե Տ Դ Ա Վ Ր Ի Ժ Ե Ց Ի

Լրացավ Մայր Աթոռի միաբան, կաթողիկոսական նվիրակ և պատմագիր Առաքել վարդապետ Դավրիժեցու մահվան 300-ամյակը:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը 21 հունվար 1970 թվակիր համար 673 կոնդակով հրահանգում էր մայիս ամսում Հայաստանյայց բոլոր եկեղեցիներում հանդիսավոր հոգեհանգիստ կատարել Առաքել վարդապետի հիշատակին և կենդանի խոսքով ու հրատարակություններով ընդգծել նրա կյանքն ու գործունեությունը:

Վեհափառ Հայրապետը Իր կոնդակում բնութագրելով ժամանակաշրջանը, նշում էր, որ հայ ժողովուրդը ԺԷ դարի սեմին ապրում էր իր հոգեվարքը՝ «մարմնապես արիւնքաւ, հոգեպէս ինքնակորոյս, իմացապէս խաւարի մէջ ընկղմած: Հոգեվարքի մէջ էր նաև Հայաստանեայց եկեղեցին: Կը թուէր թէ տասնևեօթերորդ դարը տապաւնաքարը պիտի դնէ հայոց պատմութեան»:

1441 թվականին հայրապետական Աթոռի իր պատմական, բնիկ վայրը՝ ս. Էջմիածին փոխադրվելուց հետո, 1460—1620 թվականները հանդիսացան մեր եկեղեցու պատմության ամենամուսյլ և անկյալ շրջանները, մեր երկրում տիրող քաղաքական, տնտեսական դաժան պայմանների բերումով:

Դավրիժեցին արտի մորմոքով գրում է. «Ոչ գիրս գիտէին և զգօրութիւն գրոց... տգիտութեամբ խոսակնացեալ և կորոյացեալ էր ազգն Հայոց»:

Դժվար է պատկերացնել ավելի նշգրիտ, բայց և նույնքան դառը բնորոշում՝ բնութագրելու համար մեր ԺԶ—ԺԷ դարերի կյանքը: Հայը կորցրել էր իր պետականությունը:

Արևելքից անընդհատ հորդում էին ավերիչ հուսանքները: Երկիրը դարձել էր անապատ, իսկ ժողովուրդը՝ ցիրուցան: Օսմանյան և պարսկական պետությունների միջև մղվող հաճախակի ավերիչ պատերազմների պատճառով, ամալացել էին հայ մշակույթի օջախները՝ վանքերը, ավերակ էին դարձել մեր շեն քաղաքներն ու գյուղերը, կողոպտվել՝ մեր պայծառ ու «երկնանման տաճարները»: Ադետն ու ավերմունքը գազաթնակետին էին հասել 1603—1614 տարիների շահաբաւայան բռնագաղթի հետևանքով: «Այս վերջին ավերմունքը վերջին հարվածն է տալիս հայոց հին քաղաքակրթության»,— գրում է Մանուկ Աբեղյանը: Բայց որքան ուժգին էր հարվածը, այնքան մեծ եղավ և արթնությունը: Այս անգամ էլ հայ եկեղեցին և հայ ժողովուրդը իրենց հոգում գտան կենսունակության և վերակենդանության անթելված, անապատ ուժեր ու ոտքի կանգնեցին՝ նոր հատաչդիմության գաղափարով տոգորված:

Ահա այս մուսյլ ու պայծառ, գայարունի և զարթոնքի պատմության արձագանքն է Առաքել Դավրիժեցին, այն համեստ ու սրբակրոն, աշխատասեր ու տեսլապաշտ վարդապետը: Նա ապրեց այդ անկումն ու սարսափը, բայց և հավատաց իր ժողովրդի կամքին ու տեսիլքը ունեցավ սպագա խաղաղ ու քարզավան կյանքին: Հոգու ինչպիսի ուժ էր պետք, հավատքի ինչպիսի ծայր՝ այդ անդունդ խավարում արչան հոսքի մէջ տեսնելու պայծառ գալիքը հայ ժողովրդի ու հայ եկեղեցու: «Ահա այդպիսի դաժան դարու մը սեմին, այդպիսի ողբերգական մէկ պահուն, մեր պատմութիւնը կ'արձանագրէ

նոգեկան ուժերու անհատապի ու գարմանալի գարթօնքի մը փայտատկումը», — գրում է Վեհափառ Հայրապետը Իր կոնդակում:

Առաքել Դավրիժեցին մեծացավ ու կազմակերպվեց հոգեպետ, իմացապետ Էջմիածնի Մայր Աթոռում: Աշակերտեց հայ հոգևոր գարթօնքի լուսավորիչներին ու նրանցից քաղեց իր հավատքի ուժն ու ոգու արիությունը: Սրապիոն վրդ. Եդեսացին, Պողոս վրդ. Մոկացին, Կիրակոս քին. Տրապիզոնցին, Մովսես Սյունեցին՝ Հարանց, Ծոռոթի, Աստապատի վանքերում ամբողջ նվիրումով ծավալեցին լուսավորության և ուսման գործը: «Վանքերը կենդանանալով՝ կենդանություն և թարմ հոսանք են մտցնում ժողովրդի մեջ: Զարթնում է նոր ուժով կրոնական ոգին: ...Մեր վանքերը մի անգամ էլ կատարում են իրենց պատմական քաղաքակրթության դերը, որ ունեցել էին Ժ դարում» (Մ. Աբեղյան):

1620-ական թվականներից, սակայն, հիմնական ու մշտական ծաղկող կենտրոն դարձավ Մայր Աթոռ ս. Էջմիածինը, ուր պատրաստվեցին «բազում երևելի վարդապետք, քաջաբանք, բանաստեղծք աստուածային գրոց, քաջ գիտունք և հմուտ», որոնցից մեկն էր նաև Առաքել վարդապետ Դավրիժեցին, որը եղավ գործակիցը Մովսես Գ Տաթևացի, Փիլիպպոս Աղբակեցի և Հակոբ Զուղալեցի եկեղեցաշեն կաթողիկոսների, որոնք իրենց արտառույց հավատքով, աննկուն կամքով և անսպառ եռանդով ս. Էջմիածնին վերադարձրին իր անցյալի փառքը՝ հավատալով, որ միայն «ի վերայ Աջոյն և Սրբոյ Էջմիածնի ամենայն ազգն Հայոց կապեալ կայ»:

Այս ընթացումը «հայկական ազգային դավանանքի արտահայտությունն էր», — գրում է Լեոն:

Բարենորոգվեցին վանքերը, ամեն կողմ վառվեցին հավատքի և լուսի կանթեղները: Հոգևոր դարանոցներից բազմաթիվ հոգեվորականներ գնացին ժողովրդին հոգեպետ ամրապնդելու, իր ապագայի հանդեպ հավատք ներշնչելու: Այդ վերանորոգիչներից մեկն էր Առաքել Դավրիժեցին:

Նա գտնվում է «ս. Էջմիածնի հաւատարոք ու հայրենասէր հոգևորականներու առաջին շարքին՝ իբրև եկեղեցոյ լուսամիտ ծառայ և քաջասիրտ քարոզիչ, իբրև ուսուցիչ և գրող, իբրև հաւատարիմ ու ժրաշան գործակից հայոց հայրապետներուն... իր ամբողջ կենանքով ու գործունեութեամբ համակ ներշնչում է, համակ նուիրում, անդու աշխատանք, անսակարկ ծառայութիւն, և մարմնացումը իր ժամանակի Հայոց վերածնունդ

քրիստոնէական հաւատքին ու պայծառ հայրենասիրութեան», — գրում է Վեհափառ Հայրապետը Իր կոնդակում: Վկա՝ Առաքել վարդապետի «Պատմություն»-ը: Այն ընդգրկում է 1600—1660 թվականները՝ իրենց մոռալ ու պայծառ կողմերով. «Զատն Հայաստան աշխարհին, գնուագին մերոյս ազգին և զչարութիւն մահմետականաց, զպակասին եկեղեցական կարգաց, զատերն բարձրագահ և քրիստոսաբնակ Աթոռոյն Սրբոյ Էջմիածնի»:

Առանց այդ հայրենասիրության ու նվիրումին նա իր ծեր տարիքում հանձն չէր առնի գրի առնել այդ սարսափների պատմությունը: Նա նախապահորդեց ու հատկապես ուսումնասիրեց վայրերը, իր պատմությունը ճշմարտապատում ընծայելու համար: Երկար աշխատեց ժամանակագրությունը ճշգրիտ գրելու համար: Եթե այդ բոլորին գումարենք նաև նրա գեղարվեստական նուրբ գրիչն ու պատկերավոր ու պարզ լեզուն, Դավրիժեցու «Պատմություն»-ը կը դառնա լավագույն ապացույցը վերածնված հայ և արվեստագետ հոգու:

Դավրիժեցու «Պատմություն»-ը մի համազգային վկայաբանություն և նահատակություն է», — գրել է Մ. Աբեղյանը, բայց ու միաժամանակ օրհնեցություն՝ «հայոց աշխարհի նորոգության ու ազատության մասին»։ «Այլ և զնոցին նորոգութիւն և այլ բանքս պատմութեանց... ի գիտութիւն յապալ եկելոց» (Դավրիժեցի):

Անցել է 300 տարի պայծառատես վարդապետի մահից: Բայց դարերն ավելի ևս ամրացրին նրա հավերժությունը: Նա իր կենդանությանը պատգամեց ս. Էջմիածնի ու իր ժողովրդի նոր ու լուսավոր ապագան:

Այսօր այդ ապագան ավելի քան բեղմնավոր է, խոստումնալից ու պայծառ: Հայ հողը, հայրենի վերածնած աշխարհը աներեր է, ապահով ու բարօր հայ ժողովրդի ոտքերի տակ, հայ եկեղեցին՝ ս. Էջմիածնի օրհնության ու ղեկավարության ներքո՝ լուսաշող, կենդանի ու ամբողջական:

Երեք հարյուր տարիների հեռուից Դավրիժեցու շիրիմը շունչ է տալիս հայ հոգեվորականության և աննկուն կամք՝ շարունակելու մեծ վարդապետի գործը, նվիրաբերել իր կյանքը եկեղեցուն, հայրենիքին ու ժողովրդին՝ արտառույց նվիրումով, պաշտամունքով:

Փա՛ռք Մայր Աթոռ ս. Էջմիածնին: Հավերժական հարգանք, խունկ ու աղոթք Մայր Աթոռի լուսամիտ ու հայրենասեր միաբանների հիշատակին, որոնք դարերի հոլովությի մեջ սրբությանը կատարեցին սպասը հայ եկեղեցու և հայ մշակույթի: